

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 1

2019 թվականի սեպտեմբերի 11-ին տեղի ունեցավ ՀՀ Կոտայքի մարզի Գեղաշենի Ռազմիկ Ստեփանյանի անվան միջնակարգ դպրոցի 10-րդ Բ դասարանի ծնողական ժողովը: Ժողովին ներկա էին բոլոր ծնողները, դասղեկ Հայկուհի Մանուկյանը և տնօրենի մասնագիտացված կրթական աջակցությունների գծով տեղակալ Զոյա Գևորգյանը:

### ՕՐԱԿԱՐԳՈՒՄ

1. Դասարանի ծնողական խորհրդի և խորհրդի նախագահի ընտրություն:
2. Սովորողների պարտադիր կրթության իրականացման գործընթացում անհրաժեշտ ուսումնական նյութերի ձեռքբերման համար աշխատանքներ իրականացնելու հարցը:
3. Ընթացիկ հարցեր /կարգապահություն, ռեժիմ, հերթապահություն/:

1. Լսեցին- Դասարանի ծնողական խորհրդի և խորհրդի նախագահի ընտրության հարցը:

Ելույթ ունեցավ 10-րդ Բ դասարանի ղեկավար Հայկուհի Մանուկյանը, որը ներկայացրեց ծնողական խորհրդի ընտրության կարգը:

Առաջարկվեց նոր 2019-2020 ուսումնական տարվա համար ձևավորել դասարանի ծնողական խորհուրդ նախագահ և չորս անդամ կազմով: Առաջարկվեց նշել մնացած չորս անդամների թեկնածուներին ևս: Առաջարկվեց հինգ անդամների թեկնածություն: Նախագահի թեկնածու առաջադրվեց Տաթև Թարոյանը: Կատարվեց քվեարկություն: 18 կողմ, 0 դեմ ձայներով ծնողական խորհրդի նախագահ ընտրվեց Տաթև Թարոյանը:

Որոշեցին.

10-րդ Բ դասարանում ձևավորել ծնողական խորհուրդ հետևյալ կազմով.

1. Թարոյան Տաթև /նախագահ/
2. Մկրտչյան Ամալյա /անդամ/
3. Գինոսյան Արփինե /անդամ/
4. Ավագյան Պայծառ /անդամ/
5. Հարությունյան Վեհանուշ /անդամ/

2. Լսեցին - Սովորողների պարտադիր կրթության իրականացման գործընթացում անհրաժեշտ ուսումնական նյութերի ձեռքբերման համար աշխատանքներ իրականացնելու հարցը:

Դասդեկ Հայկուհի Մանուկյանը նշեց, որ ծնողները մանկավարժական կողեկտիվի հետ միասին պետք է փորձեն միասնական պահանջներ ձևավորել երեխաների դաստիարակության հիմնախնդիրների լուծման հարցում: Նա հորդորեց ծնողներին՝ աջակցել դպրոցին, ուսուցիչներին՝ պարտադիր կրթություն իրականացնելու, սովորողներին ուսուցման և դաստիարակության համար անհրաժեշտ պայմաններ ապահովելու համար: Դասավանդող ուսուցիչներին և դասղեկին օգնել՝ ձեռք բերելու կրթության գործընթացի արդյունավետ կազմակերպման համար անհրաժեշտ տեղեր, գրենական պիտույքներ և ժամանակին վճարել դասագրքերի վարձավճարները:

Որոշեցին – Օգնել դասղեկին և ուսուցիչներին՝ ձեռք բերելու անհրաժեշտ տեղեր և կազմակերպված իրականացնել դասագրքերի վարձավճարների հավաքագրումը:



3.Լսեցին - Ընթացիկ հարցեր /կարգապահություն, ռեժիմ, հերթապահություն/:

Ընթացիկ հարցերը քննարկելիս դասղեկը ներկայացրեց դպրոցի կանոնադրությունը՝ կապված դպրոցական ռեժիմի, դասացուցակի, դասարանում կատարվող հերթապահության և այլ հարցերի վերաբերյալ: Նշվեց, որ դպրոցն աշխատում է հնգօրյա ռեժիմով, դասերն սկսվում են ժամը 9<sup>00</sup>-ին, ավարտվում՝ 15<sup>00</sup>-ին: Նա ծնողներին հորդորեց լինել հետևողական իրենց երեխաների նկատմամբ ժամանակին դպրոց հաճախելու և դասերին միշտ պատրաստ լինելու հարցում, ենթարկվեն դպրոցի ներքին կարգապահական կանոններին և աշակերտավայել վարք դրսևորեն դպրոցում:

Պետք է մշտապես պահել ծնող-դասղեկ-աշակերտ կապը և անհրաժեշտության դեպքում այցելել դպրոց՝ իրենց երեխաների վրա վերահսկողությունը մեծացնելու, աշակերտների վարքը և ուսման առաջադիմությունը բարձր մակարդակի հասցնելու համար, որ աշակերտները դպրոց հաճախեն ժամանակին ու պայուսակով, դասագրքերով, գրենական պիտույքերով ու աշակերտին վայել հագուկապով:

Որոշեցին - Առավել ուշադիր և հետևողական լինել անցումային տարիք և հոգեբանական բարդույթներ ունեցող աշակերտների հանդեպ:

Ծնողական խորհրդի նախագահ՝  
Քարսուղար՝

/  / Թարոյան Տարօն  
/  / Մկրտչյան Ամալյա